ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ PDU-54-02-22

-ը փետրվարի 2022թ.

ք. Երևան

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանի 2021 թվականի թիվ 418-Ա հրամանով, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Էդգար Տոնականյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Գլուխ 1. Պայմանագրի առարկան

1.1 Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Հաճախորդի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Հաճախորդը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ընդունել ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2 Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդին մատուցել Ունիվերսալ փոստային ծառայություններ, Միջազգային փոստային ծառայություններ, Արագընթաց փոստային ծառայություններ (EMS), ուղիղ փոստ (Direct Mail կամ DM) և Հեռագրային ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), ինչպես նաև Ծառայությունների մատուցման շրջանակներում առաջարկվող հավելյալ փոստային ծառայություններ, ինչպիսիք են՝ Մեծաքանակ միանման նամակների մշակման, Հիբրիդ փոստ, Օժանդակ ծառայություն, Սուրհանդակային և Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով առաքանիների հասցեավորման ու փոստին հանձնման հավելյալ ծառայությունները (այսուհետ՝ «Հավելյալ փոստային ծառայություններ»):

1.3 Ունիվերսալ փոստային ծառայությունների, միջազգային փոստային ծառայությունների, Արագընթաց փոստային ծառայությունների (EMS) և Հեռագրային ծառայությունների մատուցման պայմանները սահմանված են «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր հանդիսացող Համաշխարհային փոստային միության (ՀՓՄ) կանոնադրությամբ և դրա հիմքով միության անդամ պետությունների համար ՀՓՄ պարտադիր ակտերով, ինչպիսիք են՝ Համաշխարհային փոստային կոնվենցիան՝ իր կանոնակարգերով, EMS ստանդարտ համաձայնագիրն ու գործընթացները (EMS կոոպերատիվի անդամ պետությունների համար), փոստային ծառայությունները կարգավորող ՀՓՄ այլ ակտերը: Սույն կետում նշված փոստային ծառայությունների պայմանները հրապարակված են www.haypost.am պաշտոնական կայքում (այսուհետ՝ «Հրապարակված պայմաններ») և պարտադիր են Կողմերի համար ծառայությունների մատուցման շրջանակներում:

1.4 Եթե սույն պայմանագրում առկա են պայմաններ, որոնք նախատեսված չեն Հրապարակված պայմաններում կամ չեն համապատասխանում Հրապարակված պայմաններին, ապա կիրառելի են սույն պայմանագրում սահմանված պայմանները:

1.5 Հիբրիդ փոստ ծառայության շրջանակներում Ընկերությունը Հաճախորդին մատուցում է հավելյալ փոստային ծառայություններ, ինչպիսիք են՝ էլեկտրոնային եղանակով նամակագրական առաքանու